

ըրէ՛լ» ցուցուցէ՛ք անոր այն բանն ընկերն
կերպը, եւ նայեցէ՛ք որ կատարուի այն
բանը :

5. Պատժեցէ՛ք ձեր տղաքը երբ կամաւ
անհնազանդութիւն կ'ընեն, բայց մի պատ-
ժէ՛ք երբէք բարկութեամբ :

6. Ձեր տղաքը չտեսնեն երբէք որ բար-
կացած էք, կամ համբերութիւնը կորսն-
ցուցած էք :

7. Երբ կը տեսնէք որ ձեր տղաքը յուզ-
ուած եւ բարկացած են, սպասեցէ՛ք որ
հանգարտին, եւ անտեսն քաղցրութեամբ
ցուցուցէ՛ք անոնց այն կերպով վարուե-
լուն անպատեհութիւնը :

8. Գիտցէ՛ք որ փոքր պատիժը որ ժա-
մանակին կը տրուի՝ աւելի ազդու է քան
մեծ պատիժ տալու սպառնալիքը եթէ
նորէն այն յանցանքը գործեն :

9. Մի տաք երբէք ձեր տղոց ինչ որ
լայով եւ պոռակով կ'ուզեն :

10. Ամենեւին մի թողուք անոնց ընել
ինչ որ առաջ անգամ մը արգելած էք մի
եւ նոյն պարագաներու մէջ :

11. Սորվեցուցէ՛ք անոնց թէ բարի ե-
րեւնալու մի միայն ստոյգ եւ դիւրին ճամ-
բան բարի ըլլալն է :

12. Սորվեցուցէ՛ք անոնց ամէն բան
սլափել այնպէս ինչպէս է իրօք :

13. Բնաւ թոյլ մի տաք որ քսութիւն
ընեն :

14. Սորվեցուցէ՛ք անոնց անձնուրացու-
թիւն, եւ մի թողուք որ քէն կամ ո՛ր
ոչանէն ուրիշին :

ԾՈՒՂԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐ

Ովկիանոսի յառաջ, շատ խորունկ,
կան տեղեր որ կրեան «ծովային անտառ»
կոչուիլ : Այս անտառանման տեղերը կը
բուսանին ծովային ծառեր, շատ բարձր
քան որեւիցէ երկնաբերձ ծառ որ երբեք
տեսնուած է երկրի երեսին վրայ : Բայց
որովհետեւ այս ծովային ծառերուն ամէն
կողմանէ նեցուկ է ծովին ջուրը, հարկ չէ
որ անոնց բուսերը շատ զորուոր ըլլան,
այս պատճառաւ ծովային ծառերը, թէ-
պէտ երեք կամ չորս հարիւր սուք երկայն
են, շատ բարակ լուսն ունին : Այս ծովա-
յին անտառներուն մէջ միլիոնաւոր անա-
սունք թափառելով իրենց համար կերո-
ւոր եւ ասպատանարան կը գտնեն : Ա-
րարչին ձեռքն անբաւ առատութեամբ
տնկած է ովկիանոսի յառաջ ամէն տեղ-
ւոյ յարմար տունիկեր, եւ հազիւ կայ տեղ
մը ուր տեսակ մը տունիկ չգտնուի : Եթով-
մէջ ապրող անթիւ անասնոց եւ ձկնաց
անդադար շնչառութենէն կրնար ովկիա-
նոսի ջուրն անյարմար ըլլալ շնչառաց
կենդանութեանը, եթէ ջուրին մէջ գտ-
նուած կենսական օդը մաքուր պահելու
համար տնկող այն անհամար տեսակները
միշտ չգտնուէին : Մինչեւ մօտ ատեններս
կը կարծուէր թէ ովկիանոսի մէջ չափա-
ւոր խորունկ տեղեր միայն կը գտնուէին
անասուններ եւ տունիկեր, եւ թէ շատ
խորունկ տեղեր ոչ շնչառոր եւ ոչ տունիկ
կրնար տալիլ : Բայց հիմա կը տեսնուի
թէ որեւիցէ խորութեան մէջ կան անա-
սուններ, բայց տունիկ քան վեց հարիւր
ոտք աւելի խորութեան մէջ չի գտնուիր :

ՄԱՆՐ ՄԱՆՐ ԺՃԵՍՅ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մեր ազնուագոյն հանդերձին նիւթն է
չնչին թրթուրէ մը, այն է շերամ կամ
կերպասաբեր կոշտած որդէն : Մեր ներ-
կերան գեղեցկագոյն եւ պայծառագոյնը
որ քան զՏիւրացուց կարմիրը գերազանց
է՝ նոյնպէս չնչին որդնուկէ է որ որդան
կարմիր (բըրճը) կը կոչուի : Զօրաւորագոյն
խարանդ որ բժշկութեան համար կը գոր-
ծածուի՝ տեսակ մը բլբլանման միջատէ
կը շինուի : Մեկունը որ կարեւորագոյն
նիւթոց մէկն է՝ կը շինուի գլխաւորապէս
գլխովի, որ կաշին ծառին մանր ձիւղե-

րուն վրայ կը բուսնի մանր ձանձիւ մը
սերմէն : Դոճը (կէշ) որ տալագրութեան
մէջ կ'աղմուկ նիւթոց կարեւոր մէկ
մասն է՝ կը ծորէ : Հնդկաստանի ծառերուն
վրայ գտնուած միջատէ մը : Մեղուք կը
շինեն մեղր եւ մամ որ շատ կարեւոր
նիւթեր են : Միջատք որ թռչնոց եւ
ձկանց գլխաւոր ուտելիքն են՝ եփուելով
կերակուր կ'ըլլան նաեւ սլիւկայլ մարդ-
կոյին ցեղերու :

ՊՈՒԿԱՅԻՄ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՍՅԱԼ
ՆԱՀԱՅՐՆԵՐԸ

2.

Աշխարհիս կառավարութեան բոլոր կեր-
պերը կրնան երկու ընդհանուր տեսակ
բաժնուիլ սա պատճառաւ որ, թէ նպա-
տակին վրայ որոյ վրայ կառավարութիւնը
հաստատուած են, եւ թէ անոնցմէ պա-
հանջուած ծառայութեան վրայ կառավա-
րութեան յիշեալ երկու տեսակ կերպերն
տարբեր սկզբունք ունին :

Ըստ սկզբան առաջին տեսակին, նպա-
տակը որոյ վրայ կառավարութիւնը հաս-
տատուած են՝ այս է որ կառավարութիւնն
ազգին համար ընէ ինչ որ ձեռնհաս է
ընել : Ըստ սկզբան երկրորդ տեսակին,
յիշեալ նպատակն այս է որ կառավարու-
թիւնն ընէ միայն այն որ ժողովրդեան
ընդհանուր պիտոյիցը համար հարկաւոր է :

Ըստ առաջին սկզբան, ժողովրդեզ կամ
ազգը կը համարուի այնպէս ազգաւ եւ
անփորձ որ չէ կարող կառավարել զինք,
ուստի եւ կառավարութիւնը պարտի հոգալ
եւ անօրինակ ժողովրդեան ամէն պէտքը :
Ըստ երկրորդ սկզբան, ժողովրդեզ կամ
արդէն յարմար է եւ կամ շատ ժամանակ
չանցած յարմար պիտի ըլլայ ինքզինք
կառավարելու եւ իր պիտոյքն անձամբ հո-
գալու, ուստի եւ կառավարութեան գործն
է նախ հոգ տանիլ որ ժողովրդեզ բոլ-
րովին ազատ ըլլայ իր կարողութիւնները
գործածել, եւ երկրորդ չթողու որ ժո-
ղովրդեան այս իրաւունքն այլուստ բռ-
նաբարուի :

Ըստ առաջին սկզբան, ազգը կախում
ունի գլխաւորապէս կառավարութենէն որ
եւ իցէ գործի ձեռնարկելու, գործընտրի
երկաթուղի շինելու, հանք բանեցնելու,
համալսարաններ բանալու, եկեղեցական
կարգադրութիւններ ընելու, եւ, միով
բանիւ, խորհիլ եւ ի գործ դնել ինչ որ
հարկաւոր է ի բարեկեցութեան ամէն
Ըստ երկրորդ սկզբան, ժողովրդեզ կա-
խում ունի գլխաւորապէս իրմէ, եւ եթէ
ձեռնարկութիւն մը ի վեր է քան զկարո-
ղութիւն առանձին մարդոյ, այլեւայլ
անձինք արտօնութիւն ունենալու եւ միա-
նալով ընկերութիւն կազմել եւ այնպէս
այն գործն յառաջ տանել :

Ամէն տեսակ կառավարութեան ներքեւ
ժողովրդեզ, կամաւ կամ ակամայ, իր
իրաւանց մէկ մասը կը յանձնէ կառավա-
րութեան, եւ փոխանակ այն կառավա-
րութիւնը պարտական կ'ըլլայ պաշտպանել
ժողովրդեան մնացեալ իրաւանց անվրդով
վայելումը : Ամէն կերպ կառավարութեան
հիմն այս քաղաքական սկզբունքն է, բայց
ի գործադրութեան այս սկզբան տարբե-
րութիւն կայ վերոյիշեալ երկու կերպ
կառավարութեանց մէջտեղ : Որովհետեւ
ըստ առաջին կերպի կառավարութեան,
կառավարութիւնը ժողովրդեան զրեթէ
բոլոր շահերուն հոգն իր վրայ կ'առնէ,
պարտի իրեն սեպհակապէս նաեւ ժողո-
վրդեան բոլոր իրաւունքը : Այսպէս ազգը
քաղաքականապէս տղայ է, եւ կառավա-
րութիւնը քաղաքականապէս իրր ընդ
տղայոյ կը վարուի ազգին հետ : Ազգը կը
համարուի իրեւ տղէտ եւ անփորձ քաղա-
քական իշխանութիւնը բարեք վարելու,
ուստի եւ քաղաքական վարչութիւնն յանձ-
նուելու չէ անոր : Ըստ երկրորդ սկզբան,
որովհետեւ ժողովրդեզ կախեալ է կառա-

վարութենէն իւր ընդհանրագոյն շահերը
միայն հոգալու կողմանէ, յանձնելու չէ
կառավարութեան իր քաղաքական իրա-
ւունքներն աւելի քան որչափ բացարձա-
կապէս կը պահանջեն յիշեալ ընդհանուր
շահերը : Վերոյիշեալ սկզբունց միայն նա-
յելով, շարունակ միտում կայ սակաւուց
ձեռքին մէջ կեդրոնացնել քաղաքական
իշխանութիւնը, մինչ, ըստ միւս սկզբան,
միշտ միտում կայ քաղաքական իշխանու-
թիւնը ժողովրդեան մէջ տարածելու :

Թէ այս կերպերուն որն է յարմարագոյն
այս ինչ կամ այն ինչ ազգին, չի կրնար
որոշուիլ բայց եթէ նայելով ազգին մաս-
նաւոր յատկութիւններուն, եւ թէ այս
երկու կերպերուն մին կամ միւսն ինչ ըն-
դարձակութեամբ ի գործ գրուելու է այս
ինչ կամ այն ինչ ազգին մէջ, նոյնպէս չի
կրնար որոշուիլ բայց եթէ դարձեալ ազգին
մասնաւոր պարագաներուն նայելով : Յայտ-
նի է թէ ազգ մը կրնայ այն աստիճան
մտաւոր զարգացման հասած եւ այնպէս
նշանաւոր եղած ըլլալ իր բարոյական ա-
ռաքնութիւններուն կողմանէ, որ ոչ ոք
կրնայ ուրանալ անոր արժանաւորութիւնը
եւ յաջողութիւնն ինքզինք կառավա-
րելու : Ընդհակառակն, ազգ մը կրնայ
այնպէս ընկճած ըլլալ տղիտութեան մէջ
եւ այն աստիճան ընկճեալ ըլլալ կրից
բռնութեան ներքեւ, մինչեւ ամենուն
յայտնի ըլլալ թէ այն ազգն ամենեւին
արժանի չէ անձամբ կառավարուելու :
Ազգերուն մեծագոյն մասը ոչ իրենց ա-
ռաքնութիւններուն եւ ոչ իրենց միտու-
թիւններուն կողմանէ այսչափ նշանաւոր
են, այլ այս երկու ծայրերուն մէջտեղն են :

Գլխաւորութեան արժանի է որ քաղա-
քական իշխանք միշտ ըստ արժանաւոր
կշած չեն ազգին քաղաքական յաջողա-
կութիւնը եւ արժանաւորութիւնը : Միտ-
եալ են ժողովրդեան հանձնարոյն եւ առա-
քնութեան յարգը ըստ արժանաւոր
չանչնալու : Կամ չունին ժողովրդեան
տալ իշխանութիւնը զոր երկուստ ատեն
վարած են, ուստի եւ գիտարաւ կը հա-
մալուին թէ ժողովրդեզ կարող է վարել
այն իշխանութիւնը : Շատ անգամ ժողո-
վրդը յարմար եւ պարտաւոր եղած է
ինքզինք կառավարելու, իշխաններուն
այս բանը ճանչնալէն շատ առաջ : Պոնա-
բարդեանը կը կարծէին թէ իրենք միայն
կարող էին կառավարել Գաղիոյ ազգը,
եւ կը ջանային կեդրոնացնել քաղաքական
իշխանութիւնը բոլորովին իրենց ձեռքը :
Բայց Գաղիա կը ցուցնէ այսօր թէ Պոնա-
բարդեանը եւ անոնց կուսակիցները բո-
լորովին խաբուած էին իրենց իշխանա-
սիրութենէն, եւ թէ Գաղիական ազգը
քան զՊոնաբարդեանս աւելի յարմար է
գլխաւոր կառավարելու :

Պէտք է ընդունիլ նաեւ որ ազգը միշտ
կարող չէ գտնել իւր յարմարութիւնն
ինք զինք կառավարելու : Ամէն դարու մէջ
կառավարներ եղած եւ յանուն ժողո-
վրդեան քաղաքական իշխանութիւն պա-
հանջած են, առանց ամենեւին յարմար
ըլլալու վարել այն իշխանութիւնը : Գա-
ղիոյ ազգին քաղաքական իրաւունքը
մեծամեծ ազմուկներով պահանջող մար-
դոց մեծ մասն արժանի չէր քաղաքական
իշխանութիւն վարելու, ինչպէս յայտնի
եղած է 1792ին Գաղիոյ մեծ յեղափո-
խութենէն, եւ աւելի մօտ ատեն՝ Բարիլու
հասարակական քաղաքականութենէն :

Երբ Ամերիկացիք հաստատեցին իրենց
կառավարութիւնը, ուղղութեամբ դի-
տեցին այս խնդիրը : Անոնց երեսփոխան-
ները քաղաքական փայլուն ցնորքներէ
չհրապուրուեցան, այլ խնամով միտ դրին
ազգին անատենուան վիճակին եւ պարա-
գաներուն : Քննեցին կառավարութեան
վերոյիշեալ երկու կերպերը, եւ քաջ
տեղեկացան երկուքին ալ լուս եւ յուս
յատկութիւններուն : Այս քննութիւնն ը-

նելէն ետքը որոշեցին ընդունիլ այնպիսի
կառավարութեան կերպ, այնպիսի հիմ-
նական օրէնք, որ իշխանութիւնը չկեղ-
րոնացնէր սակաւուց ձեռքը, այլ թողար-
տարածել զայն որչափ հնար էր ժողո-
վրդեան մէջ : Անոնց կարծիքն այս էր որ
թէպէտ ազգը դեռ հասած չէր բարձր
աստիճանի կրթութեան, ընդհանրապէս
ունէր այնչափ լուսաւորութիւն մինչեւ
կարող ըլլալ իմաստութեամբ վարել քա-
ղաքական իշխանութիւնը : Վստահ էին
մանաւանդ ժողովրդեան բարոյականին :
Համարձակեցան քաղաքական իշխանու-
թեան մեծ մասը տալ ոչ թէ կառա-
վարութեան այլ ժողովրդեան, վստահ
կը հաւատային թէ ժողովրդեզ, թէպէտ
սուրբ չէր, բաւական առաքնի չէր չղեղ-
ծանելու իրեն յանձնուած քաղաքական
իշխանութեամբ :

Ըստ կառավարութեան կերպին զոր
վերջապէս ընդունեցան Ամերիկացոց ե-
րեսփոխանք՝ կոյ ընդհանուր կառավարու-
թիւն մը, բայց այլեւայլ նախնադէպ
ունին առանձին կառավարութիւններ, իւ-
րաքանչիւր տեղ՝ իւր ուրոյն վարչութիւնը,
եւ անհատք՝ առանձին արտօնութիւններ :
Ընդհանուր կառավարութիւնն ունի այն
իշխանութիւնը միայն որ հարկաւոր է
ընդհանուր ազգային շահուց : Ընդհանուր
կառավարութեան արտօնութիւն տրուած
չէ խառնուիլ նախնադէպ ներքին գործե-
րուն, բայց եթէ քանի մը որոշեալ կէտերու
մէջ : Իսկ իւրաքանչիւր նախնադէպ յանձ-
նուած է իւր վարչութիւնը, այսինքն
հոգալ այն գործերը որ այն նախնադէպ
ընդհանուր շահուն միայն կը վերաբերին :
Տեղական վարչութեանց մէջ ալ վարչու-
թիւնն արտօնութիւն չունի խառնուիլ
անհատներու եւ ընկերութեանց գործե-
րուն բայց եթէ այնչափ որչափ հարկաւոր է :

Ըստ յայնժամու կարծեաց, ազգին
երջանիկութիւնը կախեալ էր ի վեր քան
զամենայն անհատներուն հանձնարէն, ա-
ռաքնութենէն եւ փայլէն : Ուստի եւ
կառավարութիւնը որչափ հնար էր կը
խորհէր խառնուիլ անհատներու առանձին
գործերուն : Անոնց ազատ գործողու-
թիւններուն այնչափ միայն սահման կը
դնէր որչափ հարկաւոր էր : Կառավարու-
թենէն մասնաւոր հրաման ընդունիլ հարկ
չէր ճամբորդութիւն մը ընելու, կամ
քաղաքական, առեւտրական եւ արուես-
տական գործի մը ձեռնարկելու համար :
Կառավարութեան ուղղակի չէր օգնել
անհատներու ձեռնարկութիւններուն,
բայց ազատ կը թողար զանոնք իրենք
իրենց օգնելու : Կառավարութիւնը չէր
հաստատել այլեւայլ գործերու համար
ընկերութիւններ, բայց կասկածանք չէր
վարուել անոնց հետ որ այնպիսի ընկե-
րութիւններ կը կազմէին : Կառավարու-
թիւնն անձամբ չէր հոգար ժողովրդեան
բոլոր շահերը, բայց կը քաջալերէր ժո-
ղովրդին ինքնիրեն հոգ տանիլ : Ամէն
տեսակ գործի ձեռք չէր վարներ, բայց
կը վստահացնէր ժողովրդեզ թէ, եթէ
իրենք ձեռնարկէին, կառավարու-
թիւնը պիտի պաշտպանէր անոնց բոլոր
իրաւունքը :

Որչափ կը յիշեք, Միացեալ Նահանգաց
ընդհանուր կառավարութիւնը երբեք եր-
կաթուղի չինած չէ, երբեմն միայն ստակ
փոխ տուած է այնպիսի ճամբաներ չի-
նողներուն : Հանքեր ոչ բացած եւ ոչ
գործել տուած է, ոչ ալ գործարաններ
հաստատած է, բայց եթէ կառավարու-
թեան առանձին պիտոյիցը համար : Ձի
հաստատել զարդներ կամ համալսարան-
ներ, բայց իւրաքանչիւր նախնադէպ կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ կը
դնէ զատուարակութեան գործը, եւ
իւրաքանչիւր նախնադէպ կառավարութիւնն
ընդհանրապէս հոգ կը տանի որ ժողո-
վրդը հաստատէ զարդներ եւ համալ-

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փետ. 6 ըստ Յուն. և փետ. 18 ըստ Լուս., 1879

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻՒԹՅՈՒՆ ԽՆԴԻՐԸ

Յունաստանի սահմանագլխոյ ուղղութեան համար Բրէժէլիցի մէջ գումարուած խառն յանձնաժողովոյ առաջին բանակցութիւնները վախ կուտային թէ յանձնաժողովն ապարդիւն պիտի մնար: Մուրթար փաշա ծանոց թէ Թուրքիա պատրաստ էր աչրութեանց ժողովոյ անդամները ինքնին մտնելու: Ասկայն երկու տէրութեանց երեսփոխանք եւս ուրիշ անգամներ դարձեալ ի ժողով գումարեցան, եւ հետագայի վերջին լուրերը յայտ կու տան թէ այս խնդրոյ մասին եւս համաձայնութիւն պիտի գտնուի: Երկու կողմի երեսփոխանք սա կէտը դիտողութեան առնելու են թէ սահմանագլխոյ խնդրոյն լուծումն աւելի կարեւոր է քան քիչ մ'աւելի հող շահի կամ կորստի: Եթէ երկու կողմի երեսփոխանք այս գագաթնաւ գործեն, կրնանք յուսալ թէ այս խնդրին ալ գոհացուցիչ լուծում մը պիտի առնէ: Եթէ այս խնդիրը լուծուի, Պերլինի դաշնադրութեան գործադրութիւնը քայլ մ'եւս կը յառաջանայ:

Գաշնադրութեան միւս մասերը հետ գնեալ կը գործադրուին: Գոթմարի հողը Պարսից թաղուած է: Բուսական զորքը վերջնապէս կը պատրաստուին Եւրոպական Թուրքիայէն քաշուելու: Արեւելեան Բուսական Պաշտարանի կազմութեան պատրաստութիւնները յառաջ կը ստարան հաւատարմացնէին թէ Պաշտարանը պիտի ընդգրկմանն Եւրոպայի կառնէ: Նաեւ յայտ կայ թէ Թուրքիոյ երեսփոխանք պիտի վերականգնուի այնպիսի հիման մը վրայ որ տէրութեան վարկը տեղը պիտի բերէ: Արդ, հիմա Բ. դրան անկէ դաշնադրութեան գործադրութեան մասին նոր քայլ մը եւս առնել ներքին բարեկարգութեանց ձեռնարկելով: Եթէ Տը Թօք-վիլ մարքիզին ծրագրերը յաջողի, բարեկարգութեանց գործադրութիւնն յապաղելու վերջին պատճառն ալ մշտեղէն վերցուած պիտի ըլլայ:

ԺԱՆՏԱՆՈՑ

Բուսիոյ մէջ ծագած ժանտախտը բնականապէս մեծ ուժ եւ յուզում պատճառեց Բուսիոյ սահմանակից Եւրոպական տէրութեանց: Այս աճն ու յուզումն աւելի մեծ եղաւ սա պատճառաւ որ յիշուի կամ յանդիմանի մարդիկ կը խորհէին թէ ժանտախտն աւելի մեծ կոտորած կ'ընէր քան զոր կը խոստովանէր Բուսիոյ Եւրոպական տէրութիւնը: Գոհուցութեան միջոցներ ձեռք առին Բուսիայէն եկած ճամբորդներուն եւ վաճառացի դէմ զարնադիմացի հսկողութեան ենթարկելով: Դանիք, եւ հիմա նոյն միջոցները ձեռք առած են նաեւ Թուրքիայէն գացած ճամբորդներու եւ վաճառացի դէմ: Եւրոպայից Թուրքիոյ նաւահանգիստներէն մեկնող նաւացիք մը զգուշութեան միջոցներ ձեռք առնել հարկաւոր համարեցին, վաճառի վրայ մը տարածուեցաւ թէ Կիւմիւլէնի գաւառին մէջ ալ ժանտախտ երեւան ելած է, ուստի եւ իսպաիոյ, Յունաստանի եւ Սլաւիոյ կառավարութիւնները Թուրքիայէն եկած ճամբորդներն եւ վաճառքները 21 օր քաւանդիւն հսկողութեան ենթարկելու որոշում առին: Սակայն Կ. սրտոյ ստուգ-չապահական ժողովը կը հերքէ այնպոյցը թէ Կիւմիւլէնի գաղթականաց մէջ ժանտախտ երեւան ելած է: Այսու ամենայնիւ սոքը կրնայ ուրանալ թէ յիշեալ գաղթականաց աղտեղութիւնն եւ բազմութեամբ մէկտեղ ընտելիւն ամէն տեսակ ախտերու դուռ կը բանայ, եւ արդէն ժանտախտը (թիֆ) ճարտարած է անոնց մէջ: Ժանտախտը եւ ժանտախտ

նմանութիւն ունին իրարու, եւ ժանտախտը յառաջ բերող պատճառները կրնան նաեւ ժանտախտ յառաջ բերել: Ուստի առողջապահական ժողովը մեծ պատասխանատուութեան ներքեւ է, եւ պարտի գոհուցութեան միջոցներ ձեռք առնելով ժանտախտին այս երկիրը մտնելն արգելել: Եթէ ժանտախտն անգամ մը մտնէ հոս, ահաղին կոտորածներ կ'ընէ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բեղորուորակի Օսմանեան դեսպանատան նախորդ քարտուղար Արիստարքի պէյ Բ. դրան եւ Բուսիոյ մշտեղ կնքուած խաղաղութեան վերջնական դաշնագիրը Բուսիոյ կայսեր վաւերացնել տալու համար անցեալ հինգշաբթի օր Օսմանայի շրջանաւ ձաւագայ ելաւ Բեղորուորակի երթալու: Փիլիպպոսիոյ մէջ Յունարէն եւ Գաղիարէն լեզուաւ Փիլիպպոսիոյ անուն թերթ մը հրատարակուի սկսած է:

Աղբիւնաւորացի գաւառին պաշտօնակարներէն աւելի քան երեսուն պաշտօնակար անցեալ չորեքշաբթի օր Աղբիւնաւորացի երթալու համար ասիէ ձաւագայ ելան:

Աղբիւնաւորացի կուսակալ Բեռնի փաշա շարաթ մ'առաջ իր պաշտօնատեղին գնաց, եւ երբ երկաթուղոյ կայարանը հասաւ, Բուսաց զինուորական իշխանութեան կողմէն զրկուած երկու վաշտ զորք եւ երկու խումբ նուագաւորներ դիմաւորեցին զանի, նաեւ Բուսաց քաղաքական պաշտօնակարներէն ոմանք կայարանը զաւրով մեծ պատուով ընդունեցին զանի:

Անցեալ երկուշաբթի օր Էլեմուից պաշտօնարանն Գաղիարէն գրամատիքէն 200,000 ոսկի փոխ առաւ:

Կայսերական փողերանոցին մէջ արծաթ դրամ կոխել անժամանակեայ կերպով դադարեցուած է, եւ արծաթ դրամ կոխելու գործինքը կնքուեց ներքեւ առնուած են:

Օսմանեան արժէթուղթ ունեցող Գաղիարէնցի կողմէն Մ. Տը Թօք-վիլ անուն անձին Թուրքիոյ պարտուց կարգադրութեան համար մատուցած ծրագրերը դեռ բռնակցութեան ներքեւ է, եւ յաջողութեամբ յայտ կայ: Յիշեալ ծրագրին մէջ առաջարկուած է ընդհանուր պարտուց շահուն համար մասնաւոր յանձնաժողով մը յանձնել մաքսատանց եկամուտն, ուրի եւ ծխախոտի մաքսերը, Կիւրոսի եւ Պուլ-կարիոյ տուրքը նաեւ Արեւելեան Բուսիոյ եկամուտը: Այս եկամուտները բաւական պիտի ըլլան ընդհանուր պարտուց մէկ մասը զեղծուելէ ետքը մնացեալ մասին 100 ին 2 3/4 շահ հատուցանելու:

Անգղիոյ դեսպանին անձնական տկարութիւնն ունենալով եւ ժամանակ մը հանգստեան կարօտ ըլլալով իր կառավարութեան հրամանաւ յառաջիկայ չորեքշաբթի օր իր տիկնոջ հետ մէկտեղ Մար-սիլիոյ շրջանաւոր ճամբայ պիտի ելլէ Անգլիա երթալու:

Սղերդի եւ ձէզլիւի կողմերը Պէտր-լոսն փաշայի որդւոյ զաւր ժողովելով ժողովրդեան հանդիսը վրդովող Բիւրա տալտամբապետները դատելու համար պատերազմական ատենն մը կազմել եւ Սղերդի գաւառը պաշարման վիճակի մէջ դնել հարկ տեսնուած է: Պատերազմական ատենը գործի ձեռք գարկած եւ ատտամբապետները գատել սկսած է:

Մահմուտ Նէտիմ փաշա, որ Մուսուլի կուսակալ անուանուած էր, հրաժարած է այն պաշտօնէն, եւ հրաժարականն ընդունուած է կայսերական կառավարութեան կողմէն:

Լա Թուրքի լրագիրը կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանն հաւանութիւն տուած է որ Մուհաթ փաշա Սիւրի կուսակալ մնայ հինգ տարի:

Ջրոյց կար թէ Գաղիարէն մէջ ժան-

տախտ երեւան ելած է: Առողջապահական ժողովն այս մասին հարկ եղած քննութիւնը կատարելով կը ծանուցանէ թէ յիշեալ տեղը տարախտիկ ախտ տեսնուած է, եւ թէ եւ ըստից կողմէն քննուած հիւանդներուն վրայ ժանտախտը տեսնուած է, բայց այս անգամ ալ թէ թեւեւ ախտած է:

Գաղիարէնի իշխանը Փաղիարիայի խնդրոյն բարեկամական կերպով լուծուելուն համար հետագայով չնորհալուութիւն մատուցած է Վեհ. Սուլթանին եւ յոյս յայտնած է որ բարեկամական յարաբերութիւնը պաշտօնէն մէջ տեսական մնան:

Բաւական ժամանակէ հետէ Չաթիալայի պաշտօնավարութեանց մէջտեղ զինուորական երկաթուղի մը կը շինուէր: Սիւսիւր լրագիրը մատերս յիշեալ երկաթուղոյ շինութեան դադարած ըլլալը ծանուցանելէ ետքը կը յարէ թէ հաւանական էր որ մտերմ յիշեալ երկաթուղոյ գործածութեան պէտք ըլլար, ուստի եւ ձեռն առնէ ծանր ծախք ընելով շինութիւնը յառաջ տանելու հարկ չլար:

Լոստոնէն 4,000 ոսկի զրկուած է Արեւելեան Բուսիոյ կազմութեան յանձնաժողովոյ Անգլիական երեսփոխանին Բոստոնի աղքատաց բաժնէն համար:

Արծաթ դրամ կոխելն արդեւելու համար փողերանոցի գործինքներն կնքուեց անուշիւ շատ տարօրինակ է: Ասիէ կը հասկցուի թէ կամ գործինքն ինքնին գործելով մէճիտիէ կը կոխէին առանց հրամանի, եւ կամ փողերանոցի պաշտօնակարը կառավարութեան ազդեցութեան ներքեւ չէին: Ասոնց որն ալ ըլլայ, յայտնի է թէ փողերանոցը բարեկարգութեան մեծ պէտք ունի:

Բ. դուռը Տը Թօք-վիլ ծրագրին ընդունած էր սա պայմանաւ որ Բարիկի գրամատեարը 20 օրուան մէջ ընդունէին զայն: Հիմա Բարիկի գրամատեարը ընդունած են այս ծրագիրը սա պայմանաւ որ Անգլիա եւ Գաղիա իրենց կողմէն չորս Եւրոպայի անդամ կարգեն այն յանձնաժողովոյ որոյ ձեռքը պիտի յանձնուի ընդհանուր պարտուց շահուց յատկացեալ եկամուտներուն վարչութիւնը: Անգլիա եւ Գաղիա եւս հաւանած են իրենց կողմէն գործախատարներ կարգել, եթէ Թուրքիոյ յանձն առնէ իր մասը գործադրելու:

ԱՅԼԵՆԱՅԻՆ

Պապը ստակի մեծ կարօտութիւն ունի, ուստի եւ աշխարհիկական կողմէ գտնուած կաթոլիկներէն մասնաւոր օգնութիւն խնդրած է: Բուսը հրաման ըրած են Վիսիէն բերդը քանդելու: Պուլկարիոյ ազգային ժողովը գումարումը մարտի 18 ին յետաձգուած է: Անգլիա բաց 100,000 ոսկիէն զոր ամէն տարի պիտի հատուցանէ Բ. դրան Կիւրոս կղզոյն գրաման համար, նաեւ տարին 5,000 ոսկի պիտի տայ յիշեալ կղզոյն մէջ կառավարութեան հոլերուն համար: Գաղիա-հարկ Անգլիական զորաց ուղտերէն, փիղերէն եւ եղերէն շատերն անօթութեան պատճառաւ կը մեռնին: Կիւրոսի մէջ Ֆրամիստապի նաւահանգիստն ապաղա-յին մէջ Անգլիական նաւերուն կայարանը պիտի ըլլայ: Այս պատճառաւ յիշեալ նաւահանգիստը կը մարքուի եւ կը լայնացուի: Գաղիոյ բանակին 18 զորաւոր- ժիններուն 12 ին հրամանատարները փոխ-ուած են, փոխ զի անոնց հաւատարմութիւնն առ համարադրութիւն կասկածելի էր: Բուսը այս շարաթ պիտի պարպեն Աղբիւնաւորացի, եւ անոնց զորաց մէկ մասը Տէտէ աղաճէն նաւ պիտի նստին եւ Պոսթոլի անցնելով Բուսիապիտի գաւառն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիական զորքը յունի: 12 ին անցան Զուլուի երկրին սահմանը: Մինչեւ յունի: 21 տարեւ առ տարեւ յառաջանալ, եւ նախ յաջող էին Զուլուները հետ ըրած կռիւներուն մէջ, բայց շարաթ մը ետքը չորս զորաւոր ժիններէն մին սատակ յարձակում կրեց բազմութիւն Զուլուներէ, եւ կատարելապէս պարտուեցաւ: Անգլի- ոյցիք 60 պաշտօնակալ, 500 զինուոր, 2 թնդանօթ, 1 զրոշ, 100 պաշարի կառք եւ 1,000 արծաթ կորուսին: Այս պար- տութիւնը տխուր աղքատութիւն ըրաւ: Անգլիոյ մէջ թէ որչափ ծանր էր այս պարտութիւնը կրնայ հասկցուիլ ասիէ որ Անգլիոյ պաշտօնականներէն մին իր մէկ ա- տենախոսութեանը մէջ հարկ համարեցաւ իր ունեւորաց ըսել թէ այս ձախուղ- թիւնն անգարմանելի չէ: Հրաման ելած

է շուտով իր 5,000 զորք զրկել հարուային Արիկի մէջ գտնուած Անգլիական բա- նակին օգնութեան: Այս ձախուղութիւնն ոչ այնչափ նկատուի որչափ բարդապէս վնասեց Անգլիոյ ազդեցութեանն Արիկ- կէի մէջ: Գաղիոյ եւ Արիկի մէջ Անգլ- յական գաղթականութեան դրացի ուրիշ վայրերի ցեղեր Անգլիացոց այս պար- տութիւնէն քաջաւերուելով նորանոր յաղ- թութիւններ ձեռք բերելու պիտի աշխա- տին: Մինչեւ ցարդ այն վայրերի ցեղերը զինգլիացիս անտարտելի համարած էին: Անգլիացոց համար բարեբախտութիւն է որ միւս վայրերի ցեղերը Զուլուներու պէս կանոնաւոր զինուորական կազմու- թիւն չունին:

Աւստրիոյ պաշտօնէն քանի մ'ամիս տառ չհրաժարեցան, բայց կը շարունա- կեն գործող վարչութիւնը մինչեւ ցեղա- մութիւն նոր պաշտօնէն:

Բուսիոյ սահմանագլխոյ խնդրոյն վրայ տաք վիճաբանութեան բըռ- նուած են Բուսիականցիք: Սիւրիոյ Վ. րապ թապաւ կոչուած ամբուլիւնը դեռ յանձնած չեն Բուսաց: Այս վիճաբանու- թիւնն աւելի սաստկացած է Բուսիոյ կառավարութեան մէկ նոր հրամանաւ որ կ'արգելէ Բուսական գրաման Բուսիոյ մէջ չլքարեւութիւնը: Գերմանիա կ'ա- խառն երկու տէրութեանց մէջ միջնորդու- թիւն ընել ըստ այնմ սկզբան որ յիշուած է Գերմանիոյ կայսեր կողմէն անցեալ շա- րաթ տա աղքատին ժողովն ուղղուած պատգամագրին մէջ, յորում կայսրն ըսած է թէ Գերմանիոյ պաշտօնէն է խաղաղու- թեան միջնորդ ըլլալ:

Արիկիստանի մէջ սատակ ցուրտի պատճառաւ զինուորական գործողութիւն- ներն երկու ամիս դադարեցուած են:

Սիւրիոյ մէջ գրամատեարին մը եթէ անօրէններն որ խաղախութիւն գործած էին գրամատեարին գործող վարչութեան մէջ, 8 ամիս մինչեւ 18 ամիս լանտար- կութեան գնադարաւորուած են: Այս ան- ձանց բոլորն ալ հարուան եւ աղքատու- թեան տը մարդիկ էին, այս պատճառաւ անոնց տուած պատիժը խիստ կ'երեւի: Բայց մտերմ նայելիս յանցանքով մը դատաւարտեալ անձ մը աւելի խառն պատժուած է Բուսիոյ մէջ Սիւրիա տքոր դրկուելով եւ քաղաքական ամէն իրա-ւունքէն զրկուելով:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Զինուորական խորհրդոյ անդամ Իզ- գէթ փաշա Տիգրանակերտի, Տիգրանա- կերտի նախորդ կուսակալ Ապուրազման փաշա Պաշտարան, եւ Թեոփոյոյ նախորդ կառավարիչ Ֆէյիլ փաշա Մուսուլի կու- սակալ անուանեցան:

Վաղբիւն եւ Ֆար Տիւ Պոսթոլ լրա- գիրները զետպանի մը նկատմամբ դրած խոսքերուն պատճառաւ երկու ամիս պայ- մանաժամու դադարեցուած են:

Ելեմուից պաշտօնէն կը ծանուցանէ թէ նոր փոխառութիւնը ինքուած է, եւ որոշուած է չորս հարկերով թղթադրամի փոխարէն մէկ ոսկի տալով թղթադրամը չլքարեւութիւնը բարձրացնել:

Աւստրիոյ մէջ նոր պաշտօնէնութիւն մը կազմուած է:

Արիկիէն գարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Յունաստանի սահմա- նագլխոյ ուղղութեան յանձնաժողովն անցեալ հինգշաբթի օր երրորդ անգամ խիստ ըրաւ, բայց չլրացաւ արդիւնք մը յառաջ բերել: Վաղի Մուսուլ փաշա ծանոց թէ հրահանգ ընդունած էր որ տէրութեանց ժողովը անհապաղութիւնը վիճաբանութեան հիմ բռնուի: Յանձնաժո- ղովոյ այն նստին ատենագրութիւնները ստորագրուելէն յետոյ Յունական երես- փոխանք կը պատրաստուէին ճամբայ ել- լել, բայց Մուսուլ փաշա յայտարարեց թէ նոր հրահանգի կը սպասէ: Եւ այս յայ- տարարութեան վրայ Յունական երես- փոխանք իրենց մեկնելը յապաղեցին:

ԵՒՆԻՄՏԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏԻՄՏԱԿԱՆ

Փետ. 5/17, 1879		Փետ. 5/17, 1879	
Գոնիւթ	14 3/4	Բուսիոյ քաղ	89 1/2
Գաղիա, Օսմ.	100 1/2	Եւրոպական	87 1/2
Մեքսիկոյ	407 1/2	Գրիկի	51
Թապալապ	420	Անգլ. լրագ	109 1/2
Պիւնիստակ	48 1/2		
Հիւնդոն	12 1/2		
Մանիլ	10 1/2		

Ամերիկայի միախառնող ընկերութեան կողմէն կ'ուղարկուի Տ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ

ՏԳՊԱՐԻՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՆ Զագրագիր. Յուլիանի խան, Թիւ 42.